ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Քոչարյան Մ.Ռ., Ասատրյանց Ս.Ա.[*]

Ամփոփում: Կառավարման տեսության մեջ կառավարչական որոշումների ընդունման հիմնախնդիրը միշտապես արդիական է եղել: Ժամանակակից աշխարհում կառավարման բազմաթիվ խնդիրների շարքում կարևորվում է նաև կառավարչական որոշումների մշակման, ընդունման և իրագործման գործընթացը, որը հանդես է գալիս իբրև կառավարչական գործունեության հիմնաքար, քանի որ հենց որոշման ընդունումն է մեծապես ազդում վերջինիս և՛ բովանդակությունը, և՛ դրա արդյունքները:

Կարևոր նշանակություն ունեն հատկապես պետական կառավարման համակարգում ընդունվող կառավարչական որոշումները, քանի որ հենց այդ որոշումներն են պայմանավորում հասարակության կենսամակարդակը, սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը, ոլորտային բարեփոխումները, գործազրկության մակարդակ նվազումը: Պետական կառավարման համակարգում ընդունվող որոշումների բնույթը, ինչպես նաև իրագործման արդյունավետության բարձրացումը և դրա ընթացակարգի պատշաճ կազմակերպումը պետք է գտնվեն պետական կառավարման մարմինների ուշադրության կենտրոնում:

Բանալի բառեր. պետական կառավարում, կառավարչական որոշումներ, որոշումների իրագործում, լիազոր մարմին, իրավական կարգավորում:

JEL Classification: H70, H74, H79, H83.

1. Ներածություն

Կառավարչական որոշումների ընդունման գործընթացը միշտապես գտնվել է հետազոտողների ուշադրության կենտրոնում, քանի որ գործնականում յուրաքանչյուր գործունեություն ենթադրում է որոշումների ընդունում, հետևաբար, կարելի է ասել, որ որոշումների ընդունումը

[*] Քոչարյան Մարիաննա Ռաֆիկի — ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ, տ.գ.թ.
e-mail: marianakocharyan@mail.ru
Ասատրյանց Սարգիս Արմենի — ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.
e-mail: sasatriants@gmail.com

յուրաքանչյուր գործունեության կարևորագույն մասն է կազմում: Կազմակերպական որոշումներն ընդունվում են կառավարման բոլոր հարություններում, և յուրաքանչյուր հարթության բնորոշ է հարցերի որոշակի շրջանակ, որոնց կարգավորման համար ընդունվում են որոշումներ (Մենեջմենթ, 2016):

2. Կառավարչական որոշումների հիմնախնդիրները կառավարման տեսության մեջ:

Կառավարչական որոշումներին առնչվող հարցերը մարդկության ուշադրության կենտրոնում են եղել դեռևս հին ժամանակներից: Այդ հիմնախնդիրները այսօր էլ շարունակում են մնալ ամբողջովին չուսումնասիրված և չբացահայտված, չնայած գիտատեխնիկական առաջընթացին և մարդկության մտածողության զարգացմանը: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ կառավարչական որոշումները նպաստում են մարդու թե՛ նյութական, թե՛ հոգևոր պահանջմունքների բավարարմանը, թույլ են տալիս իրականացնել վերահսկողություն տարբեր ոլորտներում, դրանց իրականացման համար կիրառելով օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր և այլ իրավական գործիքներ:

Կառավարչական որոշումների մշակումը անցնում է մի քանի փոխկապակցված փուլերով, որտեղ մի փուլում թույլ տված սխալը հետագայում կարող է հանգեցնել մի շարք բարդությունների: Խոսելով կառավարչական որոշումների մեթոդաբանության մասին, կարելի է ասել, որ այն որոշման տարբերակի ընտրության հիմնական գործիքակազմն է: Իսկ կառավարչական որոշումների իրագործումը որոշման ընդունման տրամաբանական շարունակությունն ու ավարտն է, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է այն կազմակերպել պատշաճ կերպով, իրագործողների նկատմամբ իրականացնել վերահսկողություն և ապա վերջում գնահատել ստացված արդյունքները՝ համեմատելով դրանք սպասվող արդյունքների հետ: Եթե սպասվող արդյունքները և ստացված արդյունքները էականորեն տարբերվում են, ապա կարելի է եզրակացնել, որ կամ դրա իրականացման ընթացքում են թույլ տրվել սխալներ, կամ որոշման մշակման փուլում: Այդ իսկ պատճառով կառավարչական որոշումներ ընդունելիս և իրագործելիս պետք է հաշվի առնել բոլոր հնարավոր հանգամանքները:

3. Կառավարչական որոշումների ընդունման առանձնահատկությունները պետական կառավարման համակարգում:

Պետական կառավարման համակարգում և առօրյա կյանքում կայացվող որոշումները էականորեն տարբերվում են թե՛ իրենց բնույթով, թե՛ կառուցվածքով, թե՛ որոշման ընդունման ընթացակարգով, առհասարակ ամեն առումով: Պետական կառավարման համակարգում որոշումների ընդունման գործընթացը բարդ, աշխատատար, ժամանակատար և չափազանց պատասխանատու գործընթաց է, որն անցնում է բազմաթիվ փուլերով: Այստեղ որոշումները ընդունվում են Սահմանադրության, օրենքների, իրավական ակտերի և պետական մարմնի կանոնադրության հիման վրա, այսինքն այս դեպքում հուզական, հոգեբանական գործոնները, անձի հոգեվիճակը ազդեցություն չեն ունենում որոշման կայացման վրա՝ ի տարբերություն սովորական, առօրյա որոշման:

Տարբեր է նաև պետական կառավարման համակարգի մարմինների և արտադրական կազմակերպությունների կողմից որոշումների ընդունման և իրագործման ընթացակարգը, քանի որ պետական ապարատում որոշումների ընդունման ընթացակարգը սահմանվում է պետական մարմնի ներքին գործավարության կարգով և ՀՀ կառավարության աշխատակարգով, այսինքն գոյություն ունեն հստակ պահանջներ, որոնց խախտումն անթույլատրելի է:

Կառավարչական գործունեությունը թե՛ հանրային, թե՛ գործարար կառավարման ոլորտներում անընդհատ որոշումների ընդունման, դրանց իրագործման ապահովման գործողությունների ամբողջություն է (Սուվարյան, 2020): Հատկապես պետական կառավարման համակարգում ընդունվող կառավարչական որոշումները կարևոր նշանակություն ունեն, քանզի հենց այդ որոշումներն են մեծապես նպաստում հասարակության կենսամակարդակի բարձրացմանը, սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը, ոլորտային բարեփոխումներին, գործազրկության մակարդակի նվազմանը և այլն: Տ.Աճեմօղլու և Ջ.Ա. Ռոբինսոնի «Ինչու են ձախողվում պետությունները» աշխատության մեջ նշվում է. «… աղքատ պետություններն աղքատ են, որովհետև իշխանություն ունեցողներն աղատություն ստեղծող որոշումներ են կայացնում» (Աճեմօղլու և Ռոբինսոն, 2018): Ուստի պետական կառավարման համակարգում ընդունվող որոշումների արդյունավետության բարձրացումը և դրա ընթացակարգի պատշաճ կազմակերպումը մնում են պետական կառավարման մարմինների ղեկավարների ուշադրության կենտրոնում: Հանրային կառավարման առումով էական է, թե

ինչպիսի օրենսդրական դաշտ է ստեղծվել, որչափով է այն ապահովում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման արդյունավետությունը, քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացումը և գործունեությունը, ինչպես նաև գործարարության ազատ զարգացումը (Սուվարյան, Սարգսյան, Սուվարյան, 2019):

Ժամանակակից արագ փոփոխվող աշխարհում տնտեսությունը նույնպես զարգանում է խելահեղ արագ տեմպով, ուստի նման զարգացումները հաճախ ստիպում են կառավարությանը կայացնելու որոշումներ, որոնք պետք է համահունչ լինեն համաշխարհային տնտեսության զարգացման տեմպին: Նման որոշումների ընդունումը պետք է լինի ոչ ժամանակավրեպ և հնարավորինս արդյունավետ: Որոշումներ կայացնելիս պետք է հիշել, որ դրանք չպետք է միայն տնտեսությանը վերաբերեն, քանի որ դրա հետևանքով մեր երկիրը դուրս կմնա արտաքին տնտեսական մրցակցությունից, այսինքն կայացված որոշումները պետք է լինեն գլոբալ տնտեսական զարգացման համատեքստում: Պետք է նշել նաև, որ կառավարչական որոշումներ ընդունվում են ոչ միայն տնտեսական զարգացման համտեքստում, այլև բնակչության սոցիալ-մշակութային մակարդակի բարելավման, ժողովրդավարական արժեքների ընդունման և դրա արմատացման համատեքստում:

Այսպիսով, պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման, արագ աճող տնտեսության պահանջմունքների բավարարման լիարժեք գործիքակազմ ապահովելու համար անհրաժեշտ է, պարբերաբար ուսումնասիրել և վերլուծել կառավարչական որոշումների ընդունման ընթացակարգը և դրա վրա ազդող գործոնները, գնահատել որոշումների արդյունավետությունը: Կառավարչական որոշումների ընդունման լիազորությունները մակրոմակարդակի համար սահմանվում են երկրի սահմանադրությամբ և ոլորտային օրենքներով, միկրոմակարդկի համար՝ օրենսդրական ակտերով և կազմակերպությունների կանոնադրությամբ (Սուվարյան, 2020):

Ըստ ՀՀ Սահմանադրության 159-րդ հոդվածի՝ պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև Կառավարութանը, վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմիններ[1], որոնց կազմավորման կարգը և լիազորությունները սահմանվում են 2018 թվականին ընդունված «Պետական

[1] ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, ընդ. 06.12.15, հոդված 159:

կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքով[2]: Այս օրենքի համաձայն Կառավարության ենթակա մարմինն ապահովում է Կառավարության քաղաքականության՝ օրենքով իրեն վերապահված առանձին ուղղության իրականացումը, ինչպես նաև աջակցում է իրեն վերապահված ուղղության շրջանակներում Կառավարության քաղաքականության մշակմանը: Այդ մարմիններն են.

1. Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն,
2. Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն,
3. Պետական եկամուտների կոմիտեն,
4. Վիճակագրական կոմիտեն,
5. Քաղաքաշինության կոմիտեն,
6. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը,
7. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը,
8. Կրթության տեսչական մարմինը,
9. Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը,
10. Մննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը,
11. Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը:

Պետական մարմնում, ինչպես նաև ենթակա պետական մարմնում կառավարչական իրավահարաբերությունները, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին պետական մարմնի, ինչպես նաև ենթակա պետական մարմնի մասնակցության հիմնական պայմանները կարգավորվում են «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքով:[3]

Պետական մարմնի, ենթակա պետական մարմնի կառուցվածքը սահմանվում է վերոնշյալ օրենքի 6-րդ հոդվածով, համաձայն որի՝

1. Պետական մարմնի կառուցվածքում ընդգրկվում են պետական մարմնի ղեկավարի, պետական մարմնի ղեկավարի տեղակալի (կոլեգիալ մարմինների դեպքում՝ կոլեգիալ մարմնի անդամների), գլխավոր քարտուղարի պաշտոնները, կառուցվածքային ստորաբաժանումները, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ գրասենյակը, օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական մարմնի ղեկավարի խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի, ռեֆերենտի, պետական մարմնի ղեկավարի տեղակալի օգնականի, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնները:

---

[2] «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենք, ընդ. 23.03.2018 թ., հոդված 4, ՀՕ-260-Ն:

[3] «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենք, ընդ. 23.03.2018, ՀՕ-207-Ն

2. Ենթակա պետական կառուցվածքում ընդգրկվում են ենթակա պետական մարմնի ղեկավարի, ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալի, ենթակա պետական մարմնի ղեկավարի օգնականի, խորհրդականի (եթե օրենքով նման պաշտոն նախատեսված է), ենթակա պետական մարմնի ղեկավարի տեղակալի օգնականի պաշտոնները, կառուցվածքային ստորաբաժանումները, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ գրասենյակը, գլխավոր քարտուղարի, օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնները:

Վերոնշյալ օրենքով է սահմանվում նաև պետական մարմնի, ենթակա պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումները, գրասենյակի կառուցվածքը և կանոնադրությունը, կառավարման լիազորությունները, պետական մարմնի ղեկավարը և ղեկավարման լիազորությունները և այլն: Պետական մարմնի, ենթակա պետական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումն իրականացնում է տվյալ պետական մարմնի, ենթակա պետական մարմնի նպատակներից, խնդիրներից, իրավասությունը սահմանող իրավական ակտերից բխող, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցությունն ապահովող գործառույթներ: Կառուցվածքային ստորաբաժանման կարգավիճակին ներկայացվող պահանջները սահմանում է Կառավարությունը: Կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է մարմնի ղեկավարը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Կառուցվածքային ստորաբաժանումները դասակարգվում են երկու տեսակի՝ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ: Հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն իրականացնում են տվյալ պետական մարմնի, ենթակա պետական մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերի պահանջների կատարումն ապահովող գործառույթներ: Աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն իրականացնում են այն գործառույթները, որոնք նպաստում և աջակցում են հիմնական մասնագիտական ստորաբաժանումների գործառույթների իրականացմանը: Կառուցվածքային ստորաբաժանման գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է կառուցվածքային ստորաբաժանման՝ կանոնադրությամբ այն ստորագրելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

4. Կառավարչական որոշումների ընդունման գործընթացը Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում:

Հանգամանալից անդրադառնանք Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, նշենք, որ վերջինիս՝ որպես պետական կառավարման համակարգի մարմնի գործունեության ոլորտը շատ ընդգրկուն է:

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին», ինչպես նաև «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների՝ նախարարությունը մշակում և իրականացնում է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման, Երևանում տարածքային կառավարման իրականացման ապահովման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման միասնական տեղեկատվական համակարգի կազմակերպման, դրա ընդհանրական շահագործմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովման, մարզերի և համայնքների համաչափ զարգացմանն ուղղված նորարարական և ներդրումային ծրագրերի մշակման, վարչատարածքային արդյունավետ բաժանման, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխհարաբերությունների ապահովման, համայնքային ծառայության համակարգի զարգացման ապահովման, տրանսպորտի, լիցենզավորման և թույլտվությունների տրամադրման, Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ձևավորման, էներգետիկայի, ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության, միջուկային էներգետիկայի, վերականգնվող էներգետիկայի և էներգասպառման ոլորտում անվտանգության ապահովման, Հայաստանի Հանրապետության էներգետիկ անկախության, էներգախնայողության և էներգաարդյունավետության զարգացմանը և ընդերքի ողջամիտ ու համալիր օգտագործմանը նպաստելուն ուղղված, երկրաբանական տեղեկությունների միասնական համակարգի ստեղծման, վարման և տնօրինման, պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման և անվտանգ օգտագործման, ջրային համակարգերի կառավարման, պետական գույքի կառավարման ոլորտներում տրանսպորտի, լիցենզավորման և թույլտվությունների տրամադրման, Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի

ձևավորման, էներգետիկայի, ընդերքօգտագործման և ընդերքի պահպանության, միջուկային էներգետիկայի, վերականգնվող էներգետիկայի և էներգասպառման ոլորտում անվտանգության ապահովման, Հայաստանի Հանրապետության էներգետիկ անկախության, էներգախնայողության և էներգաարդյունավետության զարգացմանը և ընդերքի ողջամիտ ու համալիր օգտագործմանը նպաստելուն ուղղված, երկրաբանական տեղեկությունների միասնական համակարգի ստեղծման, վարման և տնօրինման, պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման և անվտանգ օգտագործման, ջրային համակարգերի կառավարման, պետական գույքի կառավարման Կառավարության քաղաքականությունը:[4]

Նախարարությունն իր լիազորությունների շրջանակում վերոնշյալ ոլորտներում քաղաքականություն մշակելիս և իրականացնելիս հիմնվում է տվյալ ոլորտը կարգավորող իրավական ակտերի՝ օրենքների, ՀՀ նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, որոշումների, հայեցակարգերի, միջազգային փաստաթղթերի և այլնի, նչպես նաև նախարարության կանոնադրության վրա: Նշենք, որ նախարարության կանոնադրությունը հաստատում է վարչապետը՝ համապատասխան նախարարի առաջարկությամբ, իսկ նախարարության ենթակա մարմիններինը՝ համապատասխան նախարարը:

«Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախարարությանը ենթակա մարմինը գործում է նախարարությանը վերապահված գործունեության ոլորտի շրջանակներում և ապահովում է նախարարության իրավասությանը վերապահված գործունեության ոլորտի առանձին ուղղությունների իրականացումը, իսկ 3-րդ հոդվածի համաձայն՝ նախարարությանը ենթակա մարմնի ենթակայությունը համապատասխան նախարարությանը սահմանում է Կառավարությունը: [5]

Նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմիններն են՝

---

[4] «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենք, ընդ. 23.03.18, ՀՕ-253-Ն, Նախարարություններին վերապահված գործունեության հիմնական ոլոորտները, 14-րդ կետ, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք, ընդ. 05.05.2019, ՀՕ-31-Ն, հոդված 11,

[5] «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենք, ընդ. 23.03.2018 թ., հոդված 6,

- Ջրային կոմիտեն,
- Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն,
- Պետական գույքի կառավարման կոմիտեն,
- Միգրացիոն ծառայությունը: [6]

Նախարարության կանոնադրության մեջ, մասնավորապես, հստակեցվում են նախարարության անվանումը և գտնվելու վայրը, նպատակներն ու խնդիրները, գործառույթները, նախարարության կառավարումը և ղեկավարումը, նախարարության կառուցվածքային ստորաբաժանումները, նախարարությանը ենթակա պետական մարմինները, նախարարության գույքը, հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունները:[7]

Նախարարության նպատակները, խնդիրներն ու գործառույթները բազմաթիվ են:

Կանոնադրության համաձայն նախարարության կառավարումն իրականացնում են ՀՀ վարչապետը և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար: Վարչապետը հաստատում է նաև նախարարության կառուցվածքը, կարող է իրականացնել կանոնադրության փոփոխություններ, իրականացնում է նախարարության գործունեության վերահսկաղությունը, լսում է նախարարության գործունեության մասին հաշվետվությունները, քննում է գործունեության ստուգման արդյունքներ, իսկ նախարարը ղեկավարում է նախարարության գործունեությունը, հաշվետու է ՀՀ կառավարությանը և վարչապետին:

Նշենք, որ նախարարության կառուցվածքում կան հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ: Ընդ որում հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն իրականացնում են Նախարարության իրավասությունը սահմանող իրավական ակտերի պահանջների կատարումն ապահովող գործառույթներ, իսկ աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն իրականացնում են այն գործառույթները, որոնք նպաստում և աջակցում են հիմնական մասնագիտական ստորաբաժանումների գործառույթների իրականացմանը:

---

[6] Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայք, http://www.mtad.am/hy/structure/ (22.03.2021)

7 Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կանոնադրություն, պաշտոնական կայք, http://www.mtad.am/hy/structure/ (22.03.2021)

Նախարարության կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում նախարարը ինքնուրույն ղեկավարում է նախարարությանը վերապահված գործունեության ոլորտը, ինքնուրույն մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության՝ նախարարությանը վերապահված գործունեության ոլորտի քաղաքականությունը, և այլն:

Նախարարի տեղակալները և գլխավոր քարտուղարը իրենց գործառույթներն իրականացնում են «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքով պետական մարմինների ղեկավարի տեղակալին և գլխավոր քարտուղարին վերապահված գործառույթները:

5. Եզրակացություն

Վերոնշյալ օրենքները, իրավական ակտերը, պետական մարմնի կանոնադրությունը հանդիսանում են այն իրավական հիմքերը, որոնցով սահմանվում է պետական մարմնի, նրա ղեկավարի լիազորությունների շրջանակը և թույլ է տալիս ղեկավարին ընդունել կառավարչական որոշումներ, որոնք միտված են գերատեսչությանը վերապահված ոլորտային քաղաքականությունը և անձնակազմի կառավարումը առավել արդյունավետ իրականացնելուն: Որոշումների կայացման իրավական մեխանիզմները նույնպես սահմանվում են գերատեսչության և ղեկավարի լիազորությունների, օրենսդրության և որոշումների կայացման ընթացակարգն ապահովող այլ իրավական ակտերով:

Գործնականում ցանկացած կառավարչական որոշում մինչ լիազոր մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից ընդունվելը և վերջնական իրավական փաստաթուղթ դառնալը շատ ավելի բազմակողմանի քննության է ենթարկվում: Որոշման ընդունման պահանջի, անհրաժեշտության ծագման պահից սկսած այն անցնում է որոշակի փուլեր, կազմվում է որոշման նախագիծ, տրվում է նախագծի ընդունման անհրաժեշտության հիմնավորումները, անհրաժեշտության դեպքում կազմակերպվում են հանրային լսումներ, նախագիծը դրվում է շրջանառության մեջ և բոլոր շահագրգիռ գերատեսչությունները ներկայացնում են իրենց առաջարկություններն ու առարկությունները: Իսկ անհատական որոշման դեպքում ընթացակարգը տարբերվում է և որոշման կայացման լիազորություն ունեցող պետական պաշտոնյան առաջնորդվում է օրենքներով և իրավական ակտերով իրեն վերապահված լիազորություններով:

Գրականություն
References (with English translation and transliteration)

- ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, ընդ. 06.12.15, հոդված 159, (22.03.2021)
- «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենք, ընդ. 23.03.18, ՀՕ-253-Ն, Նախարարություններին վերապահված գործունեության հիմնական ոլորտները, 14-րդ կետ, (21.03.2021)
- «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք, ընդ. 05.05.2019, ՀՕ-31-Ն, հոդված 11, (22.03.2021)
- «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենք, ընդ. 23.03.2018, ՀՕ-207-Ն«Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենք, ընդ. 23.03.2018 թ., հոդված 6, (20.03.2021)
- «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենք, ընդ. 23.03.2018 թ., հոդված 4, ՀՕ-260-Ն, (22.03.2021)
- Suvaryan Yu.M, (2020) “Current issues of management theory”, The National Academy of Sciences of Armenia, Gitutyun, 2020, p. 75. (in Armenian)
- Սուվարյան Յու.Մ., Կառավարման տեսության արդի հիմնախնդիրները, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, էջ 75:
- Suvaryan Yu.M, Sargsyan V.A., Suvaryan A.S., (2019) “Methodological problems of public administration ”, The National Academy of Sciences of Armenia, Gitutyun, 2019, p. 116. (in Armenian)
- Սուվարյան Յու.Մ., Սարգսյան Վ.Ա., Սուվարյան Ա.Ս., Հանրային կառավարման մեթոդաբանական հիմնախնդիրները, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, էջ 116:
- Management, Suvaryan Yu.M,(2016), Tntesaget, 2016, p 259, (in Armenian)
- Մենեջմենթ, Յու.Մ. Սուվարյանի ընդհանուր խմբագրությամբ, Ե., «Տնտեսագետ», 2016, էջ 259:
- Acemoglu, D. and Robinson, J. (2006) “Why do states fail” Antares, 2018, p. 105, (in Armenian)
- Աճեմօղլու Տ. և Ռոբինսոն Ջ.Ա., Ինչու են ձախողվում պետությունները, Եր., Անտարես, 2018, էջ 105:
- Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայք, (22.03.2021)

Ընդունված է 28.2.2021
Գրախոսված է 14.3.2021

ПРАВОВЫЕ ОСНОВЫ ПРИНЯТИЯ РЕШЕНИЙ ОРГАНАМИ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Кочарян М.Р., Асатрянц С.А.

Аннотация. В теории менеджмента всегда был актуален вопрос принятия управленческих решений. В современном мире среди множества управленческих проблем важен и процесс разработки, принятия и реализации управленческих решений. Это что является краеугольным камнем управленческой деятельности, так как само принятие решения сильно влияет на его содержание и результат.

Управленческие решения, принимаемые в системе государственного управления, особенно важны, ино эти решения, определяют уровень жизни общества, уровень социально-экономического развития, отраслевые реформы, снижение уровня безработицы. Характер принимаемых в системе государственного управления решений, а также повышение эффективности их реализации, правильная организация процедуры должны быть в центре внимания органов государственного управления.

Ключевые слова: Государственное управление, управленческие решения, реализация решений, уполномоченный орган, правовое регулирование.

LEGAL BASES OF DECISION-MAKING BY PUBLIC ADMINISTRATION BODIES IN THE REPUBLIC OF ARMENIA

Qocharyan M.R., Asatryants S.A.

Abstract. In the theory of management, the issue of decision-making has always been relevant. The process of developing, making and implementing managerial decisions is one of the most important issue in the field, among many other management problems of the modern world. This process is the cornerstone of managerial activities, because the decision-making itself greatly affects the "content" and general outcomes.

Management decisions made in the public administration system are especially important, since these decisions determine the living standards of the society, the level of socio-economic development, sectorial reforms, the reduction of the unemployment rate and many others.

Therefore, the nature of the decisions made by the public administration system, as well as the increase of the implementation efficiency, the proper organization of its procedure remain in the center of attention of the public administration bodies.

Keywords: public administration, administrative decisions, implementation of decisions, authorized body, legal regulation.